



Կարգապահական գործ թիվ ԿԳ-17045

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017 թվականի օգոստոսի 17-ի թիվ 125-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/72-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՀԱՅԿ ԱԼՈՒՄՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ խորհուրդ**), նիստը նախագահող՝ Հրանտ Անանյանի, խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Նելլի Հարությունյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Հարություն Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Հայկ Ալումյանին (արտոնագիր թիվ 284) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Ձ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

29.06.2017թ. Պալատ մուտքագրվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (**այսուհետ նաև՝ Դատարան**) դատավոր Ա.Բեկթաշյանի՝ «Դատական սանկցիա կիրառելու մասին» 23.06.2017թ. որոշումը (**այսուհետ՝ Որոշում**), որում նշվել է, որ Դատարանի վարույթում քննվող թիվ ԵԿԴ/0298/01/16 քրեական գործով 2017թ. հունիսի 23-ի դատական նիստի ժամանակ դատարանը փաստաբան Հայկ Ալումյանի (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) պաշտպանյալ ամբաստանյալ Վահան Շիրխանյանի նկատմամբ կիրառել է սանկցիա և երեք ժամով ամբաստանյալը հեռացվել է դատական նիստերի դահլիճից: Ամբաստանյալը հայտարարել է, որ իր պաշտպանը նույնպես չի մասնակցի դատական նիստերին: Դատական նիստը նախագահող դատավորի կողմից ընդմիջվել է, սակայն ընդմիջումից հետո պաշտպան Հայկ Ալումյանը դատական նիստերի դահլիճ չի վերադարձել ու առնաց նախագահող դատավորի թույլտվության չի մասնակցել դատական նիստին:

Դատարանը Որոշմամբ վկայակոչելով նշված փաստական հանգամանքները և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասը, 314.1-րդ հոդվածը 23.06.2017թ. կայացրել է «Դատական սանկցիա կիրառելու մասին» որոշում, որով որոշել է. «Պաշտպան Հայկ Ալումյանի պատասխանատվության ենթարկելու

վերաբերյալ դիմել «Հ փաստաբանների պալատ»:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 07.07.2017թ. թիվ 187-Ա/ԿԳ-17045 որոշմամբ՝ փաստաբան Հայկ Ալումյանի (արտոնագիր թիվ 284) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ Կանոնագրքի**) 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով

11.07.2017թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Մարինե Թովմայանին:

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.

Նախապատրաստող անձի կողմից Դիմողին ներկայացվել է գրավոր առաջարկություն՝ թիվ ԵԿԴ/0298/01/16 քրեական գործով 23.06.2017թ. տեղի ունեցած դատական նիստի ձայնագրառման կրիչը տրամադրելու վերաբերյալ, որին ի պատասխան ուղարկվել է թիվ ԵԿԴ/0298/01/16 քրեական գործով 23.06.2017թ. տեղի ունեցած դատական նիստի ձայնագրառման կրիչը:

Խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցված էր նիստի օրվա, վայրի և ժամի մասին:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունը.

Փաստաբան Հայկ Ալումյանը կարգապահական գործի նախապատրաստման ընթացքում ներկայացրել է բացատրություն, որով մասնավորապես հայտնել է, որ Դատարանի վարույթում գտնվող թիվ ԵԿԴ/0298/01/16 քրեական գործով ինքն իրականացնում է ամբաստանյալ Վահան Գրիգորի Շիրխանյանի պաշտպանությունը: 23.06.2017 թվականին տեղի է ունեցել նշված գործով հերթական դատական նիստը, որի ընթացքում նախագահող դատավոր Ա.Բեկթաշյանը ամբաստանյալ Վահան Շիրխանյանից պահանջել է, որպեսզի նա ոտքի կանգնի Դատարանի՝ դատական նիստերի դահլիճ մտնելիս: Պարոն Շիրխանյանը փորձել է բացատրել, որ առողջական խնդիրների պատճառով հնարավորություն չունի կանգնելու ոտքի: Դատարանը գտել է, որ պարոն Շիրխանյանն իր վարքագծով անհարգալից վերաբերմունք է դրսևորում դատարանի հանդեպ և նախազգուշացրել է, այնուհետև 3 ժամով հեռացրել է դատական նիստերի դահլիճից: Դատական նիստերի դահլիճից հեռացվելուց Վահան Շիրխանյանը խնդրել է, որպեսզի պաշտպանն առանց իրեն չմասնակցի դատական նիստին: Պարոն Վ.Շիրխանյանի նկատմամբ 3 ժամով դատական նիստերի դահլիճից հեռացնելու սանկցիա կիրառելու մասին հայտարարության հետ միաժամանակ նախագահող դատավորը հայտարարել է, որ դատական նիստը հետաձգվում է, առանց հայտնելու հաջորդ դատական նիստի ժամանակը: Մոտ 10 րոպե անց նախագահող դատավորը վերադարձել է դատական նիստերի դահլիճ և հայտնաբերել, որ Վահան Շիրխանյանի պաշտպանը դահլիճում չի գտնվում: Կարգադրիչը զեկուցել է, որ պաշտպանը հեռացել է դատարանի շենքից (ինչը համապատասխանում է

իրականությանը՝ ինքն իրոք դուրս է եկել դատարանի շենքից, ավելին, գնացել էր իր գրասենյակ): Պատասխանողը նշել է, որ պարոն Շիրխանյանի պաշտպանը չէր կարող և պարտավոր չէր կանխատեսել, թե ե՞րբ կարող է տեղի ունենալ հաջորդ դատական նիստը: Առավել ևս, պաշտպանը որևէ օրենքով պարտավոր չէր շարունակել գտնվել դատական նիստերի դահլիճում, մինչև որ Դատարանը կորոշի շարունակել դատավարությունը:

Պատասխանողը հայտնել է, որ մեղադրողը միջնորդել է պաշտպանի նկատմամբ կիրառել դատական սանկցիա, այն է՝ պատասխանատվության ենթարկելու համար դիմել ՀՀ փաստաբանների պալատ: Իր միջնորդությունը մեղադրողը պատճառաբանել է, ի թիվս այլնի, նրանով, որ պաշտպան Հայկ Ալումյանը դատական նիստից բացակայում է ըստ էության առանց պատճառի, առանց թույլտվության, առանց որևէ պատճառի մասին դատարանին տեղյակ պահելու: Պատասխանողը նշել է նաև, որ Դատարանը, առանց խորհրդակցական սենյակ հեռանալու, առանց հարուցված միջնորդության վերաբերյալ պաշտպան Հայկ Ալումյանի կարծիքը լսելու, տեղում որոշում է կայացրել, որը հրապարակվել է դատական նիստերի դահլիճում: Պատասխանողը նշել է, որ ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի պրակտիկայից հայտնի է այն հանգամանքը, որ երբ Դատարանը նման որոշում է կայացրել առանց խորհրդակցական սենյակ հեռանալու, հիմք է՝ փաստաբանի նկատմամբ դատարանի որոշման հիման վրա հարուցված կարգապահական վարույթը կարճելու համար: Միաժամանակ Պատասխանողը նշել է, որ այս ամենը հիմք է նախագահող դատավորի վարքագծի վերաբերյալ դիմի Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին դիմելու համար:

Խորհրդի նիստին Պատասխանողը ներկայացել է և պնդել իր կողմից ներկայացված բացատրությունում նշած դիրքորոշումը:

3.3. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.

Կարգապահական վարույթի գործը նախապատրաստող անձ Մարինե Թովմասյանը կազմել է եզրակացություն, որի համաձայն վերջինս գտել է, որ դատարանն առանձին ակտի ձևով, առանց խորհրդակցական սենյակ հեռանալու, կայացրել է որոշում, որի հիման վրա էլ հարուցվել է սույն կարգապահական վարույթը:

12.08.2017թ. գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2017 թվականի օգոստոսի 17-ին, ժամը՝ 19:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (**այսուհետ՝ Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված

լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդն ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապարաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վարույթում գտնվող թիվ ԵԿԴ/0298/01/16 քրեական գործով ամբաստանյալ Վահան Գրիգորի Շիրխանյանի պաշտպանությունն իրականացրել է փաստաբան Հայկ Ալումյանը:
2. 23.06.2017թ. կայացած հերթական դատական նիստին նախագահող դատավոր Ա.Բեկթաշյանը ամբաստանյալ Վահան Շիրխանյանից պահանջել է, որպեսզի նա ոտքի կանգնի դատարանի իր՝ դատական նիստերի դահլիճ մտնելիս: Վ.Շիրխանյանը փորձել է բացատրել, որ առողջական խնդիրների պատճառով հնարավորություն չունի կանգնելու ոտքի: Դատարանը գտել է, որ Վ.Շիրխանյանն իր վարքագծով անհարգալից վերաբերմունք է դրսևորում դատարանի հանդեպ, նախազգուշացրել է, այնուհետև՝գրեթա միաժամանակ, որոշում է կայացրել հեռացնել դատական նիստերի դահլիճից 3 ժամ ժամանակով: Դատական նիստերի դահլիճից հեռացվելուց Վահան Շիրխանյանը խնդրել է, որպեսզի պաշտպանն առանց իրեն չմասնակցի դատական նիստին:
3. Նախագահող դատավորը հայտարարել է, որ **դատական նիստը հետաձգվում է՝ առանց հայտնելու հաջորդ դատական նիստի ժամանակը:**
4. Շուրջ 10 րոպե անց նախագահող դատավորը վերադարձել է դատական նիստերի դահլիճ և պարզել, որ Վահան Շիրխանյանի պաշտպանը դահլիճում չի գտնվում: Կարգադրիչը զեկուցել է, որ պաշտպանը հեռացել է դատարանի շենքից:
5. Մեղադրողը փաստարկելով, որ պաշտպան Հ.Ալումյանն առանց թույլտվության և որևէ պատճառի մասին դատարանին տեղյակ պահելու բացակայում է դատական նիստից հանդես է եկել միջնորդությամբ պաշտպան Հ.Ալումյանի նկատմամբ կիրառել դատական սանկցիա, այն է՝ պատասխանատվության ենթարկելու համար դիմել ՀՀ փաստաբանների պալատ:
6. Դատարանը, **առանց խորհրդակցական սենյակ հեռանալու**, տեղում որոշում է կայացրել, որը հրապարակվել է դատական նիստերի դահլիճում և ունի հետևյալ բովանդակությունը. «Դատական նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու համար դատարանը որոշում է պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով համապատասխան դիմել Փաստաբանների պալատ՝ պարոն Ալումյանի հարցը քննարկելու վերաբերյալ»:

Վերը շարադրված բոլոր փաստերը հաստատվում են 23.06.2017 թվականի դատական նիստի ձայնագրառման կրիչով, Պատասխանողի բացատրությամբ:

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 17.08.2017թ. տրամադրված

տեղեկանքի համաձայն՝ Հայկ Ալումյանը փաստաբան է հանդիսանում 06.09.1996թ.: 2006-2017թթ. ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ հարուցվել է 3 կարգապահական վարույթ:

- 26.11.2009թ. թիվ 30/8 որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ Կանոնագրքի 4.1 կետի խախտման հատկանիշներով (կարգապահական տույժը մարվել է)
- 08.11.2013թ. թիվ 39ԿԳ/1 որոշմամբ 4.1 կետի հիմքով հարուցված կարգապահական վարույթը կարճվել է.
- 01.08.2017թ. թիվ 214-Ա/ԿԳ-17056 Կանոնագրքի 4.1 կետի հիմքով հարուցված կարգապահական վարույթը գտնվում է նախապատրաստման փուլում:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Հայկ Ալումյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթն ենթակա է կարճման, հետևյալ պատճառաբանությամբ.

Ա) «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (**այսուհետ՝ նաև Օրենք**) 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (**այսուհետ՝ նաև ՔԴՕ**) 313-րդ հոդվածի համաձայն՝

1. Այն բոլոր հարցերի առթիվ, որոնք լուծվում են դատարանի կողմից դատական քննության ժամանակ, դատարանը որոշումներ է կայացնում:

2. Գործը լրացուցիչ քննության ուղարկելու, կարճելու կամ կասեցնելու, խափանման միջոցը փոխելու կամ վերացնելու, բացարկների, փորձաքննություն նշանակելու մասին որոշումները դատարանը կայացնում է խորհրդակցական սենյակում և դրանք պետք է շարադրված լինեն առանձին փաստաթղթերի ձևով՝ ստորագրված դատարանի ամբողջ կազմի կողմից:

3. Մյուս բոլոր որոշումները դատարանի հայեցողությամբ կարող են կայացվել կամ վերոհիշյալ կարգով, կամ տեղում դատավորների խորհրդակցելուց հետո՝ որոշումը մտցնելով դատական նիստի արձանագրության մեջ:

4. Դատական քննության ժամանակ դատարանի կայացրած որոշումները հրապարակվում են:

ՀՀ դատական օրենսգրքի 63-րդ հոդվածի 7-րդ և ՔԴՕ-ի 314¹ հոդվածի 7-րդ մասերի համաձայն՝ գործի քննությանը մասնակցող դատախազի և գործի քննությանը որպես կողմի ներկայացուցիչ կամ պաշտպան մասնակցող փաստաբանի նկատմամբ կարող են կիրառվել սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերով նախատեսված սանկցիաները: Գլխավոր դատախազին կամ Փաստաբանական պալատի ղեկավարին իրականացվում է նույն դատական նիստում կայացվող դատարանի առանձին որոշմամբ: Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված դատական սանկցիան պարտադիր հիմք է դատախազի կամ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար:

Այսպիսով՝ ՔԴՕ-ի 314¹-րդ հոդվածի 7-րդ մասը փաստաբանի նկատմամբ սանկցիա կիրառելու համար նախատեսում է երեք պահանջ, որոնց միաժամանակյա առկայությունը պարտադիր է, որպեսզի դատական սանկցիան համարվի իրավաչափ առիթ և հիմք Խորհրդի կողմից փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար՝

1. Դատարանը սանկցիա կիրառելու մասին որոշումը պետք է կայացնի նույն դատական նիստում,
2. Դատարանը սանկցիա կիրառելու մասին պետք է կայացնի առանձին որոշում՝ կոնկրետ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար ՀՀ փաստաբանների պալատ դիմելու մասին,
3. Դատարանը պետք է դիմի ՀՀ փաստաբանների պալատին՝ իր կողմից կայացրած առանձին որոշումը ՀՀ փաստաբանների պալատին հանձնելու միջոցով:

Դատական նիստի ձայնագրության ուսումնասիրությունից պարզ է դառնում՝ «Դատական սանկցիա կիրառելու մասին» 23.06.2017 թվականի որոշումը դատարանը կայացրել է՝ առանց խորհրդակցական սենյակ հեռանալու: Ակնհայտ է, որ տվյալ դեպքում դատարանը Պատասխանողի նկատմամբ սանկցիա կիրառելու վերաբերյալ հիշյալ որոշումը տեղում կայացնելով, խախտել է ՔԴՕ-ով նախատեսված՝ համապատասխան որոշում կայացնելու համար սահմանված պահանջները: Դատարանը չի հեռացել խորհրդակցական սենյակ՝ որոշում կայացնելու, այլ այն կայացրել է տեղում: Հետևաբար՝ բացակայում է «Պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով համապատասխանաբար գլխավոր դատախազին կամ Փաստաբանական պալատ դիմելը» դատական սանկցիայի իրավաչափության երեք պայմաններից մեկը, որպիսի հանգամանքը զրկում է դատարանի կողմից կիրառված սանկցիան իրավաչափության և վավերության հատկանիշից:

Բ) Պալատը նպատակահարմար է գտնում անդրադառնալ նաև սույն դատական սակցիայի հիմնավորվածությանը:

Կանոնագրքի 4.1 ենթակետի համաձայն՝ «*փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային փորձունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ փորձունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ»:*

ՔԴՕ 314.¹-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 7-րդ կետերի համաձայն՝ «*դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելու կամ դատավարական իրավունքներից անբարեխղճորեն օգտվելու կամ դատավարական պարտականություններն անհարգելի չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, դատավորի օրինական կարգադրությունները չկատարելու, դատական նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու կամ նիստի կարգը խախտող այլ գործողություն կատարելու միջոցով*

դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու դեպքում դատարանն իրավունք ունի... որպես կողմի ներկայացուցիչ կամ պաշտպան մասնակցող փաստաբանի նկատմամբ կիրառել հետևյալ սանկցիաները ... 4) պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով համապատասխանաբար գլխավոր դատախազին կամ Փաստաբանական պալատի դիմելը»:

ՔԴՕ-ի 73-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «պաշտպանը պարտավոր է՝

(...)

2) ենթարկվել դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի, դատական նիստը նախագահողի օրինական կարգադրություններին.

3) մինչև ընդմիջում հայտարարելը առանց նախագահողի թույլտվության չքել դատական նիստերի դահլիճը.

(...):»:

Վերոնշյալ իրավադրույթների համադրված վերլուծությունը փաստում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք կարող են դառնալ փաստաբանի այն գործողությունները, որոնց արդյունքում փաստաբանը չի ենթարկվել դատական նիստը նախագահողի օրինական կարգադրություններին և, մասնավորապես, մինչև ընդմիջում հայտարարելը չքել դատական նիստերի դահլիճը: Ընդ որում, դատական նիստը նախագահողի կարգադրությունները, օրինականության չափանիշին համապատասխանելու համար, պետք է լինեն որոշակի, այսինքն՝ բավարար չափով հստակ և հասանելի դրանց հասցեատերերի համար, որպեսզի վերջիններս ի վիճակի լինեն դրսևորել համապատասխան վարքագիծ:

Տվյալ պարագայում նախագահող դատավորը հայտարարել է ոչ թե ընդմիջում, այլ նշել է, որ դատական նիստը հետաձգվում է՝ առանց դրա վերաբերյալ օրը և ժամը հայտարարելու, ինչը նշանակում է, որ դատարանի որոշումը բավարար չափով հստակ չի եղել Պատասխանողի համար, որպեսզի վերջինիս դրսևորեր համապատասխան վարքագիծ: Մասնավորապես, դատարանի որոշումից բավարար չափով պարզ չէր, թե երբ՝ որ օրը և որ ժամին է շարունակվելու դատաքննությունը:

Սակայն մյուս կողմից, քանի որ նախագահող դատավորը չի հայտարարել ընդմիջում, այլ նիստը հետաձգել է՝ չնշելով հաջորդ նիստի վերաբերյալ օրը և ժամը, ուստի՝ որևէ իրավական հիմք առկա չէր, որպեսզի Պատասխանողը մնար դատական նիստերի դահլիճում, իսկ անորոշության մեջ շարունակաբար դահլիճում մնալու պարտավորություն փաստաբան Պատասխանողը չուներ:

Միաժամանակ, անդրադառնալով 23.06.2017թ. դատական նիստի ընթացքում տեղի ունեցած հանգամանքներին՝ Պալատի խորհուրդն արձանագրում է, որ ուշադրության է արժանի նաև Դատարանի՝ ի դեմս դատավոր Ա.Բեկթաշյանի վարքագիծը: Մինչ փաստաբանի վարքագծին գնահատական տալը նույն դատարանի կողմից դրսևորվել է այնպիսի վարքագիծ, որը Պալատի խորհրդի կարծիքով անհրաժեշտ է դիտարկել նաև դատավորի վարքագծի կանոնների լույսի ներքո:

ՔԴՕ 304-րդ հոդվածի համաձայն՝

«1. Պաշտպանը դատական քննությանը մասնակցելիս օգտվում է մեղադրողի հետ հավասար իրավունքներից:

2. Պաշտպանի չներկայանալու և այդ նիստում նրան մեկ ուրիշ պաշտպանով փոխարինելը հնարավոր չլինելու դեպքում գործի քննությունը հետաձգվում է: Դատական նիստին չներկայացած պաշտպանի փոխարինումը թույլատրվում է միայն

ամբաստանյալի համաձայնությամբ: Եթե ամբաստանյալի կողմից հրավիրված պաշտպանի մասնակցությունն անհնար է անընդմեջ երեք դատական նիստի չներկայանալու կամ տևական բուժում պահանջող հիվանդության կամ որևէ այլ հիմքով երկար ժամանակով դատական նիստին ներկայանալու անհնարինության պատճառով, դատարանը, հետաձգելով դատական քննությունը, իրավունք ունի ամբաստանյալին առաջարկել ընտրելու այլ պաշտպան, իսկ նրա հրաժարվելու դեպքում՝ նշանակել նոր պաշտպան: Գործը հետաձգելիս, լուծելով պաշտպանին փոխարինելու հարցը, դատարանը հաշվի է առնում նման որոշման նպատակահարմարությունը (դատական քննության վրա արդեն ծախսված ժամանակը, գործի բարդությունը և դրա հետ կապված դատական քննությանը նոր մասնակցող պաշտպանի կողմից գործի նյութերի ուսումնասիրման փոփոխությունը և այլ հանգամանքներ): Գործին նոր մասնակցող պաշտպանին դատարանը բավարար ժամանակ է տրամադրում գործի նյութերն ուսումնասիրելու համար: Նա իրավունք ունի միջնորդելու կրկնել ցանկացած գործողություն, որը դատական քննության ընթացքում կատարվել է նախքան իր ընդգրկվելը գործին, և որի արդյունքում գործի համար էական հանգամանքներ են պարզվել»:

Վերոնշյալ իրավական նորմի բառացի բովանդակությունից հետևում է, որ դատարանն իրավասու չէ միջամտելու ամբաստանյալի և նրա պաշտպանի ներքին հարաբերություններին, քանի դեռ պաշտպանը երեք անգամ անընդմեջ չի բացակայել դատարան նիստերից: Նշված իրավական նորմը կոչված է երաշխավորելու մեղադրյալի պաշտպան ունենալու և պաշտպանության իրավունքը չհիմնավորված և հիմնավորված արտաքին միջամտություններից բացառության կարգով որպես ծայրահեղ միջոց: Ի դեպ, նման լիազորության կիրառումը ցանկացած դեպքում չի կարող արդարացված լինել, քանի որ քրեական գործի մեծածավալ կամ դատավարության որոշակի փուլեր անցած լինելու դեպքում նման լիազորության կիրառումը չի կարող ծառայել անգամ հանրային շահերին, քանի որ վերջիններս ողջամտորեն կարող են ավելին տուժել, քանի որ նոր պաշտպանի պետք է ծանոթանա գործի նյութերին, հասցնի քննարկել և համաձայնեցնել պաշտպանական ռազմավարությունը վստահորդի հետ և այլն, ինչի համար կպահանջվի տևական ժամանակ:

Տվյալ դեպքում նախագահող դատավորը անհիմն միջամտել է այդ հարաբերություններին՝ ապօրինի որոշում կայացնելով հանրային պաշտպան ներգրավելու մասին, նույնիսկ անտեսել է, որ հանրային պաշտպան ներգրավելու դեպքում քրեական գործի դատական քննության ողջամիտ ժամկետները էապես կտուժեն:

Խորհուրդը գտնում է, որ թիվ ԵԿԴ/0298/01/16 քրեական գործով 23.06.2017 թվականին կայացած նիստի ընթացքում նախագահող դատավորի վարքագիծը չի համապատասխանում ՀՀ դատական օրենսգրքի 89-րդ հոդվածով սահմանված պահանջներին և դատավորի գործողություններում առերևույթ առկա են նշված նորմերի խախտումներ, որպիսի հանգամանքը ենթակա է ստուգման համապատասխան մարմնի կողմից:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7- րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի

կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց ՝

1. Փաստաբան Հայկ Ալումյանի (արտոնագիր թիվ 284) նկատմամբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման հիմքով հարուցված թիվ 17045 կարգապահական վարույթը կարճել:

2. Դիմել ՀՀ արդարադատության խորհրդին թիվ ԵԿԴ/0298/01/16 գործով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների առաջին ատյանի դատարանի դատավոր Ա.Բեկթաշյանի վարքագիծը քննարկելու համար:

3. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝

- սույն որոշման մասին իրազեկել կողմերին.

- սույն որոշումը ներկայացնել Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի

կարգապահական գործով

նիստը նախագահող՝

Հրանտ Անանյան